

ԼԵԶՎԱԿԱՆ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ

Ս. Ն. ՎԱՐՊԱՆՅԱՆ

Լեզուները միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց կառուցվածքային առանձնահատկություններով, այլև իրենց «երաժշտությամբ»:

Լեզվական «երաժշտություն» ասելով հասկանում ենք հնչերանգի¹, ուղիղ և ծախային որակի (տեմբրի) օրինաչափ ելևէջներն ու փոփոխությունները, որոնց ներդաշնակ (փոխկապակցված) համակարգը ստեղծում է այդ լեզվին բնորոշ «երաժշտությունը»: Այլ կերպ ասած՝ լեզվական «երաժշտությունն» այն «նվագախումբն» է², որով լեզուն ստանում, ծեռք է բերում իր կենդանի բովանդակությունը:

Թերևս միանգամայն օրինաչափ է, որ անձանոք լեզվով խոսակցություն լսելիս մեր ուշադրությունը գերազանցապես գրավում է տվյալ լեզվի «երաժշտությունը», որը կախված այն բանից, թե ինչպես են խոսում այդ լեզվով, մեր լսողության համար կարող է լինել բարեհնչյուն կամ ոչ բարեհնչյուն:

Անգամ ամենագեղեցիկ «երաժշտությամբ» օժտված լեզուն էլ կարող է կորցնել իր գեղեցկությունը, եթե այդ լեզվով խոսում են ոչ գեղեցիկ, ոչ բարեհնչյուն, ուստի այս կամ այն լեզվի երաժշտականության չափանիշը առաջին հերթին պայմանավորված է բարեհնչյուն կամ գեղեցիկ խոսելու հմտության, օժտվածության հետ:

Բոլոր լեզուներն ունեն իրենց հատուկ «երաժշտությունը», որի շնորհիվ մենք տարբերում ենք, օրինակ, չինարենը ծապոնեբեռնից կամ անգլերենը՝ ֆրանսեբեռնից, իսկ յուրաքանչյուր ազգային երաժշտության հիմքում ընկած է լեզվական հենց այս «երաժշտությունը», որի միջոցով էլ տարբեր ազգային երաժշտությունները զանազանվում են միմյանցից:

Այս առիթով ֆրանսիացի մեծ մտածող Ժան Ժակ Ռուսսոն գրել է. «Ամեն մի ազգային երաժշտություն իր բնույթը հիմնականում փոխառում է լեզվից...», իսկ «...այդ բնույթը գրիխավորապես բացահայտվում է առոգանության (պրոսոդիայի) միջոցով»³: Զարգացնելով Ռուսսոյի միտքը՝ մենք կարող ենք ավելացնել, որ կենսունակ է այն ազգային երաժշտությունը, որն իր բնույթով ավելի մոտ է կանգնած լեզվական «երաժշտությանը», ավելի ծննդատուն է արտացոլում այն:

Լեզվական «երաժշտությունը» գոյություն ունի լեզվի մեջ և նրա միջոցով: Զանի որ լեզուն պայմանական նշանների համակարգ է, ապա լեզվական «երաժշտությունը» նույնպես տվյալ լեզվի համար ունի պայմանական բնույթ, որը հարորդվելով սերնդե-սերունդ՝ գոյատևում է այնպես ժամանակ, որքան գոյատևում է այդ լեզուն⁴: Լեզուն մեռնելիս՝ մեռնում է նաև նրա «երաժշտությունը»: Այդ իսկ պատճառով մենք ամբողջական պատկերացում չունենք այնպիսի լեզուների «երաժշտության» մասին, ինչպիսիք են սանսկրիտը, հին հունարենը կամ հին անգլերենը, որոնք արդեն մեռած լեզուներ են:

Լեզվական «երաժշտության» և ընդհանրապես երաժշտության միջև գոյություն ունեցող տարբերությունն այն է, որ վերջինս արվեստի մի տեսակ է և ծառայում է գեղագիտականին, միևնույն լեզուն իարդրակցման միջոց է, և նրա «երաժշտությունն» էլ պետք է ծառայի հարդրակցմանը⁵: Բացի այդ, այս կամ այն կոմպոզիտորի կամ ժողովրդական երաժշտությունը

¹ Ընչեղանակը մենք դիտում ենք որպես առոգաբանական միջոցների մի ամբողջություն: Տե՛ս A. C. Axmanova, Словарь лингвистических терминов, М., 1969, էջ 180:

² Այս առումով մեր բնորոշումը տարբերվում է Ռ. Ս. Գրեհեմի բնորոշումից: Տե՛ս R. S. Graham The Music of Language and The Foreign Accent, The French Review, vol. 42, 1969, p. 447.

³ Տե՛ս Жак-Жак Руссо. Письмо о французской музыке, Изб. соч., т. 1, М., 1961, էջ 184:

⁴ Տե՛ս R. S. Graham, նշվ. աշխ., էջ 447:

⁵ Նույն տեղում, էջ 445:

հիմնված է ներդաշնակության կանոնների վրա: Նկատի ունենալով հենց այս հանգամանքը՝ Ռ. Ս. Գրեհեմը մատնանշում է, որ երաժշտությունը «ներդաշնակ է, մինչդեռ լեզվական «երաժշտությունն» ավելի բարդ է ու պակաս ներդաշնակ»⁶, քանզի հանպատրաստի բնույթ ունի և օբյեկտիվորեն կախված է խոսողի կամքից⁷:

Լեզվական «երաժշտություն» տիրապետումը շատ կարևոր հանգամանք է այն առումով, որ զգալիորեն նպաստում է օտար լեզուների ուսումնասիրմանը, որովհետև այդ «երաժշտության» բացակայությունը խոսքին հաղորդում է, աչպես կոչված, «օտարերկրացու» առոգանություն⁸: Ռա կարող է դրսևորվել նաև այն ժամանակ, երբ լեզու ուսումնասիրողը թույլ է տալիս նրա արտասանական կանոնների շեղումներ:

Թեև արտասանությունը լեզվի «երաժշտությունը» չէ, այլ միայն հնչյունների արտաբերման ձևը⁹, սակայն արտասանական ծիշտ կանոնների պահպանումն առաջին կարևոր նախապայմանն է օտարերկրացու առոգանությունից խուսափելու համար: Արտասանական դժվարությունները հաղթահարելի են, և դրան կարելի է հասնել յուրաքանչյուր հնչյունի ծիշտ նկարագրի, բացատրության ու արտասանության վրա համառ աշխատանքի շնորհիվ: Լեզվական «երաժշտությունը» յուրաքանչյուր լեզվի «հոգին ու շունչն է, այն չի կարելի ոչ ինչպես հարկն է (համարժեք) բացատրել, և ոչ էլ ինչպես հարկն է ուսուցանել»¹⁰: Այն պետք է լսել ծիշտ այնպես, ինչպես ունկնդրում են երաժշտական մի որևէ ստեղծագործություն կամ մեղեդի ու մտապահելով՝ ընդօրինակել: Հետևաբար, լեզվական «երաժշտությանը» տիրապետելու համար անհրաժեշտ է ունենալ լավ լսողություն, որը հնարավորություն կընձեռի ծիշտ ընկալելու ու վերարտադրելու այն: Նման լսողությունից զուրկ մարդիկ սովորաբար լեզվաընդունակ չեն լինում և օտար լեզու ուսումնասիրելիս բարդությունների առաջ են կանգնում, մինչդեռ լավ լսողությամբ և ընդունակելու մեծ ձիրքով օժտված մարդկանց համար ավելի հեշտ է ու մատչելի հաղթահարել լեզվական «երաժշտության» դժվարությունները:

Եթե լեզվական «երաժշտության» տիրապետման հմտությունը և ձիրքը պայմանավորված են լավ լսողությամբ, ապա ինչպե՞ս է հաջողվում նման լսողություն չունեցող անձանց տիրապետել իրենց մայրենի լեզվի «երաժշտությանը»: Բանն այն է, որ դրա տիրապետումը սկսվում է վաղ մանկությունից, նույնիսկ՝ օրորոցից, իսկ ինչպես հայտնի է, այդ հասակում երեխայի ընկալելու ու վերարտադրելու ընդունակությունները շատ ցայտուն են դրսևորվում: Լսելով մայրական խոսքն ու նրա «երաժշտությունը»՝ երեխան դեռևս օրորոցում իր համապատասխան վերաբերմունքն է արտահայտում: Եթե մայրական խոսքը չեղմ ու փաղաքջական է, ապա այն երեխայի մոտ գոհունակություն է առաջացնում, մինչդեռ բարկացկոտ ու սաստող տոնը կարող է դժգոհության և լացի տեղիք տալ: Հենց այս հասակում է նրա խոսքի վրա դրվում մայրենի լեզվի «երաժշտության» կնիքը, որը նա կրում է ամբողջ կյանքի ընթացքում: Եթե մայրական խոսքն ու «երաժշտությունը» բարբառային են, ապա երեխայի խոսքի վրա սկզբից նեթ դրվում է բարբառի կնիքը, որից նա հետագայում դժվարությամբ է ազատվում կամ էլ չի հաղթահարում:

Երբ երեխան վաղ հասակից սկսում է խոսել երկու լեզվով միաժամանակ, ապա նա երկու լեզվի «երաժշտությանն» էլ տիրապետում է լիարժեք ու խոսում այդ լեզուներով առանց առոգանության: Ուստի առոգանության ի հայտ գալու պատճառը օտար լեզու ուսումնասիրողի համար հասուն տարիքն է¹¹: Այս տարիքում որևէ օտար լեզու ուսումնասիրելիս նա փորձում է օտար լեզվի «երաժշտությունն» անցկացնել իր մայրենի լեզվի «երաժշտության մաղով»¹², որն էլ նրա խոսքին օտարերկրացու առոգանություն է հաղորդում: Հետևաբար, առոգանությունը լեզվական «երաժշտության» ոչ ծիշտ ընդօրինակումն ու վերարտադրումն է:

Այս առումով օտար լեզու ուսումնասիրող անհատներին կարելի է բաժանել երեք խմբի¹³. 1) ուժեղ առոգանությամբ խոսողներ, 2) թեթևակի առոգանությամբ խոսողներ, 3) առանց առոգանության խոսողներ:

⁶ Նույն տեղում, էջ 446:

⁷ Այս տեսակետից միանգամայն իրավացի էր Բ. Կրոչեն՝ գտնելով, որ «ցանկացած մարդու կողմից արտաբերված յուրաքանչյուր բառ ու նախադասություն ամբողջովին եկթարվվում են նրա անհատական կամքին»: Տե՛ս P. A. Будагов, Что такое развитие и совершенствование языка. М., 1977, էջ 189:

⁸ Տե՛ս R. S. Graham, նշվ. աշխ., էջ 447:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 449:

¹¹ Նույն տեղում, էջ 447:

¹² «Մաղ» հասկացությունը հնչյունաբանության մեջ առաջին անգամ օգտագործել է Ն. Ա. Տրուբեցկոյը, «հնչյունաբանական մաղ» իմաստով: Տե՛ս Н. С. Трубецкой. Основы фонологии, М., 1960, էջ 59:

¹³ Տե՛ս R. S. Graham, նշվ. աշխ., էջ 448:

Լեզվի ուսումնասիրության գործընթացում նրանք կարող են մի աստիճանից մյուսին անցնել: Ոմանց հաջողվում է հասնել երրորդ աստիճանին, ոմանք էլ ընդմիջո մնում են առաջին աստիճանի վրա¹⁴:

Այս առթիվ հարց է ծագում, իսկ մի՞թե լեզվական «երաժշտության» բացակայությունը խաթարում է հաղորդակցությունը: Ինչ խոսք, նրա բացակայությունը խոչընդոտող հանգամանք չէ հաղորդակցման համար, սակայն այն է հենց խոսքին հաղորդում նրբագեղություն, պերճաշուքություն¹⁵, և, վերջապես, այդ «երաժշտության» միջոցով է դրսևորվում տվյալ լեզվի բնույթը:

Լեզվական «երաժշտությունը», որն ընդգրկում է լեզվի բոլոր միջոցներն ու հնարավորությունները, իր կոնկրետ իրացումն է գտնում խոսքային «երաժշտության» միջոցով: Այլ կերպ ասած՝ լեզվական և խոսքային «երաժշտությունները» գտնվում են նույն հարաբերակցության մեջ, ինչպես լեզուն ու խոսքը:

Ներկայումս, երբ անգլերեն լեզուն դարձել է զանգվածային հաղորդակցման միջոց, որն ամենուրեք տեղի է ունենում հիմնականում բանավոր, բանավոր խոսքն ու խոսքային «երաժշտությունը» լեզվաբանության մարզում հրատապ նշանակություն են ստանում:

Անտեսել անգլերեն լեզվի արտասանական կանոններն ու նրա խոսքային «երաժշտությունը», նշանակում է խոսել «օտարերկրացու» առոգանությամբ, որն անհամատեղելի է վերջին տարիներին անգլերենի բանասիրության բնագավառում ձեռք բերված գիտական նվաճումների հետ: Այդ նվաճումներն անգլերեն լեզվի բանասերների առջև դնում են բարդ, միաժամանակ հրատապ ու անհետաձգելի խնդիր՝ տիրապետել լեզվին առանց առոգանության¹⁶: Այսինքն՝ հնարավորին չափ մոտեցնել իրենց խոսքն այդ լեզուն «կրողի» խոսքին¹⁷: Ուստի անգլերեն լեզվի բանասիրության զարգացման արդի փուլում այդ լեզվի արտասանական ճիշտ կանոններին ու նրա խոսքային «երաժշտությանը» տիրապետելը յուրաքանչյուր բանասերի հպմար դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Այդ պահանջները բավարարելու համար հարկավոր է հիմնական շեշտը դնել բանավոր խոսքի վրա: Այժմ արդեն չի կարելի սահմանափակվել ու օտար լեզվին տիրապետելու չափանիշ համարել միայն գրավոր խոսքի ու այդ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների իմացությամբ: Լեզվի ուսումնասիրության այս մոտեցումը թերևս հանդուրժելի է մեռած լեզուների նկատմամբ: Մինչդեռ անգլերենի համար հնչերանգը, բացի քերականական ու վերաբերմունքային գործառությունից, կատարում է նաև մեկ այլ՝ գեղագիտական գործառություն: «Բառի ու նախադասության գեղագիտական գունավորումն անզուգական է», — այդ առիթով գրում է գերմանացի լեզվաբան ու գրականագետ Կարլ Ֆոսկերը, «և հենց այդ գունավորումն է լեզվում զլխավոր ֆունկցիա կատարում»¹⁸:

Անշուշտ, կախված հնչերանգի ելևէջներից, բառն ու նախադասությունը կարող են տարբեր իմաստներ ձեռք բերել ու տարբեր վերաբերմունք արտահայտել: Հնչերանգի այս ելևէջներն էլ իրենց արտացոլումն են գտնում խոսքային «երաժշտության» մեջ:

Ցավոք, «բանավորությունը մինչև այժմ էլ անուշադրության է մատնում լեզվի այս կարեվոր գործառությունը»¹⁹, որը կնպաստի խոսքի արտահայտչականությանը և կբարձրացնի խոսքի կոլտուրան:

С. Н. ВАРДАНЯН—Значение языковой «музыки» в сфере языкознания.—Языки отличаются друг от друга не только своей структурой, но и своей «музыкой». Под языковой «музыкой» имеются в виду закономерные модуляции и изменения интонации ритма и тембра, гармоничная, взаимосвязанная система которых создает для данного языка характерную «музыку». Языковая музыка находит свою конкретную реализацию в речевой музыке.

Проведение языковой «музыки» иностранного языка через сито «музыки» своего родного языка придает речи иностранный акцент. Владение языковой музыкой может способствовать развитию эстетической функции языка и повышению культуры речи.

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Ղ. Վ. Целебрицкая, Тембр 11 в составе регистра научного общения, Автореферат канд. диссерт., М., 1985; նաև՝ А. Б. Мишин, Русский акцент в английской речи. Автореферат канд. диссерт., М., 1980:

¹⁷ А. С. Gimson, An Introduction to the Pronunciation of English, 3rd ed., London, 1980, p. 304.

¹⁸ Տե՛ս К. Vossler, Sprache als Schöpfung und Entwicklung. Eine theoretische Untersuchung mit praktischen Beispielen. Heidelberg, 1905, s. 48—50,

¹⁹ Տե՛ս Р. А. Будагов, Եզվ. աշխ., էջ 188: